գուցեալ Աւետիք Ղուկասեանի կտակի գործը։

Մայիս 28, № 1599. Յանձնարարուեց երդուեալ հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանին լիազօրութիւն (передовѣріе) տալ պ. Սպենդերեանին վերոյիշեալ գործի պաշտպանութեան համար։

Մայիս 30, № 1605. Հրահանգուեցաւ Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին, թէ քահանաները չեն կարող ընտրուել ժողովրդի կողմից պատուիրակ կաթուղիկոսական պատգամաւորի ընտրութեան համար։

Մայիս 30, № 1607. Առաջադրուեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիային թոյլ չտալ ժամերգութիւն կատարել Ախալքալակցի Մարգար Կարապետեանի վախճանուած որդու դերեզմանի վերայ շինած դամբարանում։

ՓԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Մայիսի 2-ին, թ. 298. Սինօդը լսեց Մայր Աթոռի հողերը ուռոգելու համար Զանգու գետից ջուր բերելու գործը։ Որոշեց. յանձնել ինժեներ Զաւալիշինին և Տեխնիկ Մանուչարեանին կազմել ծրագիր (проектъ), Զանգուի ջուրը մինչև Մ. Աթոռի հողերը հասցնելու և այդ աշխատութեան համար տալ նրանց վարձ 2500 ռուբլի։

Մայիսի 4-ին, թ. 302. Սինօդը լսեց բագուեցի հանգուցեալ Եկատերինա Մայիլեանի կտակի գործը, որով նա կտակել է, ի միջի այլոց, Ս. Էջմիածնին 500 ռ. Ս. Երուսաղէմի հայոց վանքին 500 ռ. Լէնքորանի հայոց եկեղեցուն 200 ռ., այդ եկեղեցու օրիորդաց դպրոցին 300 ռ. և Շամախու հայոց եկեղեց. ծխական դպրոցին 300 ռ. Որոշեց ուղարկելով կտակի պատճէնը Շամախու Հայոց Կոնսիստորիային, պատուիրել նրան նախ՝ կարդացնել տանալ Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի օգտին կտակած դրամները և երկրորդ՝ կտակի պատճէնները տալ Լէնքո-

րանի և Շամախու ծխական հոգաբարձութեան՝ նոցա օգտին կտակած դրամներն ստանալու համար։

Մայիսի 13-ին, թ. 317. Սինոդը լսեց Տփխիսի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցու միաբանութեան և ծխական հոգաբարձութեան յայտարարութիւնը Ղուկաս Տէր Դաւթեանին յիշեալ եկեղեցու համար սարկաւագ ձեռնադրելու մասին։ Որոշեց. ի նկատի ունենալով, որ Սինոդիս հաստատած շտատով Տփխիսի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցին պէտք է ունենայ երկու քահանայ և մի սարկաւագ, բայց այժմ ունի երեք քահանայ, այդ խնդրի մասին եկեղեցու միաբանութեան, ծխական հոգաբարձութեան և ծխական ժողովի միջնորդութիւնը թողնել առանց հետևանքի։

Մայիսի 13-ին, թ. 319. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի տարեոյս փետրուար ամսի 7-ի № 531 յայտարարութիւնը Ախալքալակի գաւառի Լօմատուրա գիւղացի Ստեփան Տէր Ղուկասեանին քահանայ ձեռնադրելու մասին։ Որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային ընդունել Տէր Ղուկասեանին հոգևոր կոչման մէջ և առաջադրել նոյն Կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին ձեռնադրել նորան քահանայ Ախալքալակի գաւառի Ղազարաբ գիւղի համար։

Մայիսի 18-ին, թ. 334. Սինոդը լսեց Գանձակի Ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխականների տարեոյս յունվարի 10-ին խնդիրը Մկրտիչ քահանայ Աստուածատրեանի մասին։ Որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց Կոնսիստորիային Տ. Մկրտիչ քահանայ Աստուածատրեանին ծխատէր քահանայի պաշտօն տալ թեմի յարմարաւոր տեղում, իսկ եթէ ազատ տեղ չլինի, կարգել նորան կրկին «Զոլակի» ուխտատեղու կառավարիչ, յատկացնելով նորա ապրուստի համար յիշեալ ուխտատեղու արդիւնքը, ի բաց առեալ Սինոդին հատանելի 70 ռուբլին։

Մայիսի 20-ին, թ. 337. Սինոդը լսեց Աստրախանի Կոնսիստորիայի տարեոյս յունվարի 31-ի № 102 յայտա-

բարութիւնը, որով խնդրում է բացատրել, թէ ինչ ձևով պէտք է ընդունել մեր եկեղեցու ծոցը մօլոկաններին, արդեօք պէտք է ս. մկրտութեան խորհուրդ կատարել, թէ ոչ։ Որոշեց. յայտնել Ատրպատականի Կոնսիստորիային, ինչպէս նաև շրջաբերական հրամանով բոլոր միւս Կոնսիստորիաներին, թէ երբ Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունելու դիմումն անեն այնպիսի քրիստոնեայ դաւանութեան պատկանող անձինք, որ չէ ընդունում ջրով մկրտութիւն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այդպիսիներին պէտք է մկրտել Հայաստանեայց եկեղեցու ծիսով, իսկ եթէ խնդրատուները մկրտուած լինեն, բայց ոչ դրոշմուած, այն ժամանակ նոցա պէտք է միայն դրոշմել։

Մայիսի 20-ին, թ. 339. Սինոդը լսեց Կովկասի պ. Փոխարքայի 1911 թ. մարտի 13-ի № 5486 շրջաբերական գրութիւնը ենջեղեաներին եկեղեցիների դաւթում թաղելու կարգի մասին՝ Որոշեց. ուղարկելով թեմական Առաջնորդներին Կովկասի Տ. Փոխարքայի տարեւոյս մարտի 13-ի № 5486 շրջաբերականի պատճէնը առաջադրել նոցա, որ ըստ առաջնոյն եկեղեցիների դաւթում ենջեցեալ թաղելու համար Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կամ նորա Տեղակալի հաճութիւնն առնելուց յետոյ ստանան այսուհետև ոչ թէ Փոխարքայի, այլ տեղական Նահանգապետի համաձայնութիւնը։

Մայիսի 23-ին, թ. 342 Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի տարեւոյս Մարտի № 1851 յայտարարութիւնը Արաէն Տէր Մխիթարեանին և Վահան Տէր Մինասեանին Նոր-Բայազետի նոր Գեօղալդարա գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին։ Որոշեց. Երևանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Արաէն Տէր Մխիթարեանին և Վահան Տէր Մինասեանին Նոր Գեօղալդարա գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին թողնել առանց հետևանքի, որովհետև յիշեալ գիւղը բաղկացած է 450 տանից, իսկ քահանայացուները չունին ծխական կանոնադրութեամբ պահանջուող 4-րդ դասարանի վկայական։

Մայիսի 23-ին, թ. 343. Մինոգը լսեց Ներքին Գործերի Նախարարության տարեոյս ապրիլի 27-ի, թ. 3986 առաջադրությունը Բախմուտ քաղաքում Հայոց աղօթատուն կառուցանելու մասին։ Որոշեց. պատուիրել Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային կարգադրել, որ միջնորդություն յարուցուի Բախմուտի Հայ Համայնքի կողմից գնելու Թուխունճեանի տունը կառուցանելիք աղօթատան անունով և ոչ մասնաւոր անձի, որպիսին է այս դէպքում երեսփոխան Մաքսիմաճեանցը։ Իսկ եթէ գործը որ և է դժուարության հանդիպի ապագայ աղօթատան անունով գնելու համար, տնօրինել, որ յիշեալ կալուածքը գնուի Ս. Էջմիածնի անունով յիշեալ քաղաքում աղօթատուն շինելու համար։

Մայիսի 23-ին, թ. 348 Մինոգը լսեց Ներքին Գործերի Պ. Նախարարի տարեոյս ապրիլի 30-ի, թ. 3992 առաջադրությունը Կաթուղիկոսական ընտրության համար պատգամաւորներ ընտրելու ձևի մասին։ Որոշեց. շրջաբերական հրամանով առաջադրել Ռուսաստանի Հայոց բոլոր թեմական Առաջնորդներին, որ Կաթուղիկոսական ընտրության մասնակցելու համար ընտրուելիք պատգամաւորների ընտրությունը կատարելիս անխախտ պահպանուեն Կոլկատի Փոխարքայի 1865 թ. դեկտեմբերի 29-ին հաստատած կանոնների 1—3 յօդուածները։

Մայիսի 27-ին, թ. 357. Մինոգը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի Նախագահողի տարեոյս ապրիլի 19-ի թ. 530 յայտարարությունը Գորի քաղաքի Սահակ քահանայ Տէր Մինասեանի անվայել ընթացքի մասին։ Որոշեց. Սահակ քահանայ Տէր Մինասեանին իւր կոչման անվայել ընթացքի համար ենթարկել երկամսեայ եկեղեցական ապաշխարության, դադարացնելով քահանայագործությունից և յանձնելով նորա ծխականների հովությունը ուրիշ քահանայի, որին տալ Սահակ քահանայի հատոյթի մի երրորդը։ Վճռիս կատարման համար տալ հրաման Վրաստանի Հայոց Կոնսիստորիային։

Մայիսի 27-ին, թ. 360. Սինոդը Որոշեց. պատուիրել բոլոր Կոնսիստորիաներին կարգադրել, որ մետրիքական գրագուածները, որ տրւում են զինուորակոչ ատեաններին, նախապէս ամենայն ուշադրութեամբ համեմատուեն շափաբերական մատեանների արձանագրութեանց հետ և ինամքով ստուգուեն։

Մայիսի 27-ին, թ. 363. Սինոդը լսեց Կարսի շրջանի Բաշ գիւղի ծխականների խնդիրը Սուքիաս ժամկոչեանին քահանայ ձեռնադրելու մասին։ Որոշեց. նկատի առնելով, որ Սուքիաս ժամկոչեանը չունի թեմական դպրոցի կամ ճեմարանի 4-րդ դասարանի վկայական, որ պահանջւում է ծխական կանոնադրութեամբ 100 տանից աւելի ծուխ ունեցող գիւղի քահանայացուից, Բաշ գիւղի ծխականների խնդիրը թողնել առանց հետեւանքի։

Մայիսի 27-ին, թ. 364. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի տարւոյս մայիսի 15-ի, թ. 2246 յայտարարութիւնը Տփխիսի Մողնու Ս. Գէորգ եկեղեցու սարկաւագ Տիգրան Պարոնեանին քահանայ ձեռնադրելու համար։ Որոշեց. նկատի առնելով, որ Տիգրան սարկաւագ պարոնեանը ունի թեմական դպրոցի 3-րդ դասարանի վկայական և ոչ չորրորդի, որ պահանջւում է ծխական կանոնադրութեամբ 100 տանից աւելի ծուխ ունեցող գիւղի քահանայացուից, Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջնորդութիւնը թողնել առանց հետեւանքի։